

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

29.12.2023 թ.

Դպրոցի տնօրեն Ա. Նազարյան



<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՆՐԱՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՏԱՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍԱՍՅԱԿԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏՈՒՍՉՏ՝  Գայանե Ռուբիկի Գաջյան

e-mail` gajyan@bk.ru

## Պաշտոնային պարտականություններ

Պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար
Պատասխանատու է հաստատությունում ուսումնական ծրագրերի կատարման համար
Պատասխանատու է հաստատությունում դասավանդման որակի համար
Պատասխանատու է հաստատությունում սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույնի ապահովման համար
Պատասխանատու է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համար
Պատասխանատու է <u>անհատական ուսուցման պլանի (ԱՌԻՊ) մշակման, իրականացման և գնահատման համար</u>
Պատասխանատու է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար
Հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի նկատմամբ
Հսկողություն է իրականացնում սովորողների առաջադիմության նկատմամբ
Հսկողություն է իրականացնում սովորողների վարքի նկատմամբ
Հսկում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը
Կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը
Իրականացնում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը
Ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները
Կազմակերպում է սովորողների ուսումնական պարապմունքների հսկողությունը:
Կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը
Կազմում է ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ
Ընդհանրացնում է մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձը
Տարածում է մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձը

**Ուսումնական տարվա սկիզբ՝ 2023թ. սեպտեմբերի 1**  
**5-օրյա աշխատանքային**  
**Ռ Ե Ժ Ի Մ**


<b>Արձակուրդներ</b>	<b>1-ին դասարաններ</b>	<b>2-4 դասարաններ</b>
աշնանային	հոկտեմբերի 16-27	հոկտեմբերի 23-27

**Ուսումնական շաբաթներ**

	<b>1-ին դասարաններ</b>	<b>2-րդ դասարաններ</b>	<b>3-4 դասարաններ</b>
<b>1-ին կիսամյակ</b>	14 շաբաթ+1օր	15 շաբաթ+1օր	15 շաբաթ+1օր

**2023-2024 ուստարվա վիճակագրություն տարրական դասարաններում**

Աշակերտների թիվը ուստարվա սկզբին	Աշակերտների թիվը 1-ին կիսամյակի վերջում	Գնացող աշ.թիվ	Եկող աշ. թիվ
<b>451</b>	<b>454</b>	<b>10</b>	<b>13</b>



Վերլուծություն. համադրելով տվյալները նախորդ ուստարվա 1-ին կիսամյակի շարժի հետ՝ փոփոխությունների դինամիկան կայուն է:

Դասարաններ	Աշակերտների թիվ	Որից՝ ԿԱՊԿ ունեցող աշակերտներ
1 <sup>ա,բ,գ,դ</sup>	115	3
2 <sup>ա,բ,գ,դ</sup>	113	1
3 <sup>ա,բ,գ,դ</sup>	114	3
4 <sup>ա,բ,գ,դ</sup>	112	1
<b>16</b>	<b>454</b>	<b>8</b>

Դպրոցի տարրական կրթության աստիճանում դասերը սկսվեցին 1-4-րդ դասարաններում՝ սեպտեմբերի 1-ին, կոմպլեկտավորվեցին **16** դասարաններ՝ **451** համակազմով: Տնօրենի հրամանով ձևավորվեց տարրական կրթության առարկայական մեթոդական միավորումը 16 դասվարական, 1 երաժշտության ուսուցչի, 2 շախմատի ուսուցիչների կազմով: Դասաբաշխման հիման վրա առաջին կիսամյակի դասացուցակը հաստատվել և գործածության է դրվել սեպտեմբերի 1-ին:

Ուստարվա սկզբին ուսումնադաստիարակչական աշխատանքները մեկնարկեցին տարեկան թեմատիկ պլանավորումների հիման վրա, որոնք ձևավորվել են հաստատություններում գործածվող փաստաթղթերի լրացման կարգի համաձայն (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. սեպտեմբերի 8-ի N28-Ն հրաման), ներբեռնվել են էլեկտրոնային մատյան: 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները ուղղված էին պետական չափորոշիչներին համապատասխան առարկայական ծրագրերի իրագործմանը:

**Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Դպրոցի ուսումնական պլանի հիմնավորում և վերլուծություն

Դպրոցի ընդհանուր դասաժամերը տարրական դպրոցում ըստ 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանի՝ **400** ժամ, որից՝

Պետական պարտադիր բաղադրիչ՝ **380** ժամ

Դպրոցական բաղադրիչ՝ **20** ժամ

Ըստ ուսպլանի ընդհանուր դասաժամերը տարրական դպրոցում՝ **400** ժամ

Անհատական/ընտրովի/ բաղադրիչ՝ **1** ժամ/երաժշտություն/

Երկարօրյա ուսուցում՝ **2** ժամ/մայրենի՝ **1** ժամ, մաթեմատիկա՝ **1** ժամ/

**2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ**

/հաստատված է մանկավարժական խորհրդի 2023 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1 աձանագրային որոշմամբ/

- ✓ Ուսումնական պլանը ձևավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հուլիսի 27-ի N98-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանների» հիման վրա 3-4-րդ դասարաններում, իսկ 2-րդ դասարաններում 2023-2024 ուստարում ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում նոր չափորոշի ներդրմամբ պայմանավորված նոր չափորոշի հիման վրա կազմված ուղեցույցին համապատասխան:
- ✓ Պահպանվել է պետական բաղադրիչով սահմանված 1-4-րդ դասարաններում պետական պարտադիր առարկայացանկում ընդգրկված առարկաներին հատկացվող նվազագույն ժամաքանակները և երաշխավորված առարկայացանկը:
- ✓ Դպրոցական բաղադրիչի ժամաքանակները հատկացվել են «Մաթեմատիկա» առարկային 2-րդ դասարաններում /1/, «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներին 3-4-րդ դասարաններում /2/՝ մեթոդական միավորման առաջարկությամբ և հաստատվել է մանկավարժական խորհրդի որոշմամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ			
	1 դաս.	2 դաս.	3 դաս.	4 դաս.
Մայրենի	7	7	8+1	8+1
Ռուսաց լեզու		3	2	3
Օտար լեզու /անգլերեն/			2	2
Մաթեմատիկա	4	4+1	4+1	4+1
Երաժշտություն	2	2	1	1
Կերպարվեստ	2	2	1	1
Ես և շրջակա աշխարհը		1	1	2
Տեխնոլոգիա	2	2	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2
Շախմատ		1	2	2
ԹԳԹՀ		1		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>20</b>	<b>26</b>	<b>26</b>	<b>28</b>

**Նկատառում.** աճել է 2-րդ դասարաններում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը դասաժամերի ավելացման/երաժշտություն, կերպարվեստ, ռուսաց լեզու/ և նոր առարկայի/ԹԳԹՀ/ ներդրման հաշվին:

**2023-2024 ուսումնական տարվա տարրական դասարանների**

**ԴԱՍԱԲԱՇԽՈՒՄ/դասվարներ/**

Դասվար Դասարան	4ա	4բ	4գ	4դ	3ա	3բ	3գ	3դ	2ա	2բ	2գ	2դ	1ա	1բ	1գ	1դ
Արշակյան Ն.	18															
Վարդանյան Ջ.		18														
Խաչատրյան Լ.			18													
Ղուրուխյան Է.				18												
Անտոնյան Ս.					17											
Օսիպյան Ֆ.						17										
Օսիպյան Լ.							17									
Զարբարյան Բ.								17								
Մանուկյան Ծ.									18							
Պողոսյան Գ.										18						
Իսագուլյան Ա.											18					
Օհանջանյան Ե.												18				
Սահակյան Ա.													15			
Հովհաննիսյան Թ.														15		
Հակոբյան Ն.															15	
Թորոսյան Ս.																15

**2023-2024 ուսումնական տարվա տարրական դասարանների**

**ԴԱՍԱԲԱՇԽՈՒՄ/առակայական ուսուցիչներ/**

Ուսուցիչ Քասարան	4ա	4բ	4գ	4դ	3ա	3բ	3գ	3դ	2ա	2բ	2գ	2դ	1ա	1բ	1գ	1դ
Մակինյան Լ./երգ/ <b>24 ժամ</b>	1	1	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2	2	2
Հայրապետյան Հ./ֆիզկուլտ/ <b>30 ժամ</b>	2	2	2	2	2	2	2	2		2			3	3	3	3
Գևորգյան Լ. /ֆիզկուլտ/ <b>6 ժամ</b>									2		2	2				
Ստեփանյան Մ./շախմատ/ <b>12 ժամ</b>					2	2	2	2	1	1	1	1				
Մարտիրոսյան Լ./շախմատ/ <b>8 ժամ</b>	2	2	2	2												
Ալեքսանյան Մ./ռուսացի/ <b>29 ժամ</b>	3	3	3		2	2	2	2	3	3	3	3				
Մանուկյան Ա./ռուսացի/ <b>3 ժամ</b>				3												
Հովհաննիսյան Լ./անգլերեն/ <b>16 ժամ</b>	2	2	2	2	2	2	2	2								

**2023-2024 ուստարվա տարրական դասարանների ուսումնական  
պարապմունքների**

**Դ Ա Ս Ա Ց ՈՒ Ց Ա Կ**

Դասացուցակը կազմելիս հաշվի է առնվել՝

- ✦ ՀՀ Առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանով սահմանված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N2.2.4-016-17 սանիտարական նորմերից և կանոններից բխող դասացուցակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, դասաժամերի օպտիմալ հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա և շաբաթվա ընթացքում ուսումնական առարկաների ճիշտ հաջորդականությունը՝ բնական, մաթեմատիկական և հումանիտար առարկաների դասաժամերը երգի, կերպարվեստի և ֆիզկուլտուրայի դասաժամերին, ինչի շնորհիվ պահպանվել է սովորողների մտավոր գործունեությունից ֆիզիկականի փոխվելու հնարավորությունը:
- ✦ Պարապմունքների ընթացքում ուսուցիչները ստեղծել են կարճատև դադարներ՝ երեխաների մկանային ստատիկ լարվածության վերացման և մտավոր աշխատունակության բարձրացման նպատակով:
- ✦ Շաբաթվա ընթացքում երեխաների ուսումնական ծանրաբեռնվածությունը բաշխվել է այնպես, որպեսզի ամենամեծ ծավալը հնարավորինս լինի երեքշաբթի և /կամ/ չորեքշաբթի օրերին, քանի որ երեխայի մտավոր աշխատունակության մակարդակը բարձրանում է շաբաթվա կեսին, իսկ սկզբին և վերջում՝ ընկնում է:
- ✦ Ստուգողական աշխատանքները ուսուցիչները հանձնարարել են ուսումնական շաբաթվա մեջտեղում և 2-4-րդ դասերին:
- ✦ Տնային առաջադրանքները ուսուցիչները սովորողները տվել են ելնելով դրանք կատարելու հնարավորությունից՝ 1-ին դասարանում՝ չեն տրվել, 2-3-րդ դասարաններում՝ մինչև 1,5 ժամ, 4-րդ դասարանում՝ մինչև 2 ժամ:
- ✦ Դասացուցակը կազմելիս հաշվի է առնվել նաև յուրաքանչյուր առարկայի բարդության աստիճանը՝ բալերով արտահայտված:

<b>Հանրակրթական առարկաներ</b>	<b>Միավորների քանակը /բարդության աստիճան/</b>
Մաթեմատիկա	8
Ռուսաց լեզու	7
Օտար լեզու	8
Ես և շրջակա աշխարհը	6
Մայրենի	5
Կերպարվեստ և երաժշտություն	3
Տեխնոլոգիա	2
Ֆիզկուլտուրա	1
Շախմատ	8



Շաբաթվա օր	4ա	4բ	4գ	4դ	3ա	3բ	3գ	3դ	2ա	2բ	2գ	2դ	1ա	1բ	1գ	1դ
Երկուշաբթի	34	33	33	27	27	34	21	21	21	21	28	27	19	19	19	19
Երեքշաբթի	35	34	35	31	27	27	32	34	26	34	27	24	19	19	19	19
Չորեքշաբթի	27	30	37	30	32	24	34	28	29	25	24	29	16	16	16	16
Հինգշաբթի	35	34	29	35	34	36	34	34	34	29	31	23	14	14	14	14
Որբաթ	30	29	26	35	29	28	28	32	20	21	20	24	18	18	18	18

**Նկատառում.** որոշակի օրերի առկա է շեղում,ինչը պայմանավորված է առարկայական ուսուցիչների ծանրաբեռնվածությամբ նաև հիմնական դասարաններում,այդ իսկ պատճառով կատարվել են դասացուցակային հարմարեցումներ տարրական և հիմնական դասարանների դասացուցակների համադրման նպատակով:

## 2023-2024 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

### ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցի տարրական աստիճանում ուսուցումը 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում տարվել է պետական ուսումնական ծրագրերի պահանջներին և չափորոշիչներին համապատասխան, դաստիարակչական գործընթացը իրականացվել է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերին համապատասխան:

Տարվող կրթադաստիարակչական աշխատանքներում հաստատությունը առաջնորդվել է <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքներով , <<Համընդհանուր ներառականության մասին>> հայեցակարգով ,դպրոցի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

Պետական ուսումնական պլանը ըստ ուսումնական առարկաների ուստարում իրագործվել են ամբողջությամբ: Դպրոցական բաղադրիչը 2-4 դասարաններում միտված էր ուսումնական առարկաների /մայրենի,մաթեմատիկա/ հիմնական ծրագրերի արդյունավետ իրագործմանը,նոր չափորոշիչ ներդրմանը և կրթության որակի բարձրացմանը:

2023-2023 ուսումնական տարվա սկզբին մինչև սեպտեմբերի 5-ը 1-4 դասարանների դասվարները և առարկայական ուսուցիչները ներկայացրել են տարեկան թեմատիկ պլանավորումները ըստ ուսումնական շաբաթների:

	1 դասարան	2 դասարան	3 դասարան	4 դասարան
Ուսումնական շաբաթներ	30	32	34	34

2023-2024 ուստարվա տարրական դասարանների դասվարների թեմատիկ պլանների

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն

Դաս.	Մայրենի			Մաթեմատիկա			Ես և շրջակա աշխարհը			Կերպարվեստ			Տեխնոլոգիա		
	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.
1ա	99	1	97	57		57				28	1	27	29		29
1բ	99	1	97	57		57				28	1	28	29		29
1գ	99	1	97	57		57				28	1	28	29		29
1դ	99	1	97	57		57				28	1	28	29		29
2ա	106	1	105	76	1	75	15	1	14	31	1	30	31		31
2բ	106	1	105	76	1	75	15	1	14	31	1	30	31		31
2գ	106	1	105	76	1	75	15	1	14	31	1	30	31		31
2դ	106	1	105	76	1	75	15	1	14	31	1	30	31		31
3ա	136	1	135	76	1	75	15	-	15	16		16	15		15
3բ	136	1	135	76	1	75	15	-	15	16		16	15		15
3գ	136	1	135	76	1	75	15	-	15	16		16	15		15
3դ	136	1	135	76	1	75	15	-	15	16		16	15		15
4ա	136	1	134	76	1	75	31	-	31	16	-	16	15	-	15
4բ	136	1	134	76	1	75	31	-	31	16	-	16	15	-	15
4գ	136	1	134	76	1	75	31	-	31	16	-	16	15	-	15
4դ	136	1	134	76	1	75	31	-	31	16	-	16	15	-	15

**2023-2024 ուստարվա 1-ին ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ տարրական դասարանների  
առարկայական ուսուցիչների թեմատիկ պլանների**

**Կ Ա Տ Ա Բ Ո Ղ Ա Կ Ա Ն Ժ Ա Մ Ա Ք Ա Ն Ա Կ Ն Ե Բ**

Դաս.	Ֆիզկուլտուրա			Ռուսաց լեզու			Օտար լեզու/անգլերեն/			Երաժշտություն			Շախմատ		
	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.	Նախ. ժ/ք	Ոչ աշխ. օր/ժ.ք	Ընդ. կատ.
1ա	42	--	42							28	--	28			
1բ	42	--	42							28	1	27			
1գ	42	--	42							28	--	28			
1դ	42	--	42							29	--	29			
2ա	28	1	27	43	1	42				30	--	30	15	--	15
2բ	28	--	28	43	1	42				30	--	30	15	--	15
2գ	28	1	27	42	1	41				30	--	30	15	--	15
2դ	28	--	28	43	1	42				30	1	29	15	--	15
3ա	31	--	31	30	1	29	30	--	30	15	-	15	30	--	30
3բ	30	1	29	31	--	31	30	--	30	15	-	15	30	--	30
3գ	30	1	29	30	--	30	31	1	30	15	-	15	30	--	30
3դ	31	--	31	30	--	30	31	1	30	15	-	15	30	--	30
4ա	31	--	31	43	--	43	30	1	29	15	-	15	30	--	30
4բ	30	--	30	43	--	43	30	1	29	15	-	15	30	--	30
4գ	31	1	30	43	--	43	30	1	29	15	-	15	30	--	30
4դ	30	--	30	43	1	42	31	--	31	15	-	15	30	--	30

**Վերլուծություն.** Ուսումնական ծրագրերի կատարողականը համատասխանում է առարկայական ծրագրերի ուսումնական պլանով սահմանված ժամաքանակներին, գերակատարումներ և թերակատարումներ չեն արձանագրվել, էլեկտրոնային մատյանում տնային աշխատանքների գրանցումները համապատասխանում են ծրագրային կատարվածի քանակին, բացթողումներ չեն եղել, ուսուցիչները էլեկտրոնային մատենավարական աշխատանքները կատարել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N28-Ն հրամանով սահմանված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը սահմանելու, դրանց լրացման/ գործածման/ կարգի» 1-8 կետերի համաձայն: Ըստ ՀՊԶ-ի 1-4-րդ դասարաններում դասվարները և առարկայական ուսուցիչները կազմել են թեմատիկ տարեկան պլանավորումները, որտեղ սահմանված էին 1-4 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, կարևորվել էին

վերառարկայական, միջառարկայական, ներառարկայական կապերի հաստատումը: Այդ առնչությունները ապահովել են սովորողների մոտ գիտելիքների յուրացման խորությունը և բազմաշերտությունը :

2023-2024 ուստարում առարկաների ուսուցման իրագործումը տարրական դասարաններում իրագործվել է համաձայն ՀՊԶ-ի հետևյալ կերպ՝

- **«Մայրենի»** դասավանդումը/1-4-րդ դասարաններ/ չափելի էր իր վերջնարդյունքներով/բանավոր և գրավոր հաղորդակցում, ընթերցանություն, լեզվական և արժեքային համակարգերի ձևավորում/ , որը հիմք է ստեղծում ուսումնառության շարունակականության համար: Մյուս կողմից՝ մայրենիի ուսուցումը այլ առարկաներ, այդ թվում՝ օտար լեզուներ ուսումնասիրելու հիմնական միջոցն է:
- **«Մաթեմատիկայի»** /1-4-րդ դասարաններ/ ուսուցման նպատակները չափելի էին իրենց ակնկալվող վերջնարդյունքներով/թվաբանական գործողություններ կատարելու բանավոր և գրավոր հմտությունների ձևավորումը, դիտարկելու, կռահելու, եզրակացություններ անելու կարողությունների ձևավորում/ , ինչն անհրաժեշտ է գործնական կիրառությունների, հարակից առարկաների ուսումնասիրման և կրթության շարունակականության համար::
- **«Ես և շրջակա աշխարհը»** /1-4-րդ դասարաններ/ առարկայի դասավանդման ընթացքում առաջնորդվել են ուսուցիչները չափորոշչային պահանջներով՝ պահպանելով առարկայի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները/պարուրածն սկզբունքով՝ ուսումնասիրված նյութերը ընդլայնվում և խորացվում են մյուս դասարաններում/:
- **«Տեխնոլոգիա»** /1-4-րդ դասարաններ/ առարկայի ուսումնական ծրագիրը պլանավորել են ուսուցիչները ՀՊԶ –ով սահմանված դադափարների հիման վրա /գրաֆիկա, նյութեր և կառուցվածքներ, գործընթացներ և արտադրություն, ձեռնարկատիրություն, տեխնոլոգիա և կյանք/:
- **«Կերպարվեստ»** /1-4-րդ դասարաններ/առարկայի դասավանդումը իրականացրել են երկու հիմնական բաժիններով՝ զեղարվեստական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում, ինչը թելադրում է ՀՊԶ-ն:
- **«Շախմատ »** /2-4-րդ դասարաններ/առարկայի ուսուցումը 2-4-րդ դասարաններում հիմնված է խաղի և գործնական աշխատանքների վրա, ինչը միտված էր սովորողների սոցիալական հմտությունների ձևավորմանը:
- **«Ֆիզկուլտուրա»** /1-4-րդ դասարաններ/ առարկայի դասավանդումը իրագործվել է առողջ, համակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը պատրաստ, սեփական ուժերի հանդեպ վստահ, առողջ և անվտանգ կենսակերպ դրսևորող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող ու նախաձեռնող քաղաքացու ձևավորման ուղղությամբ: ԿԱՊԿՈՒ երեխաները ևս ունեցել են հնարավորություն ճանաչելու սեփական ֆիզիկական հնարավորությունները և դրանց համապատասխան զարգացնելու իրենց շարժողական ընդունակությունները:
- **«Երաժշտություն»** /1-4-րդ դասարաններ/առարկայի դասավանդման ընթացքում շեշտը դրվել է սովորողների դաստիարակչական կողմի, երաժշտության ընկալման և հուզական կողմի վրա: 1-4-րդ դասարաններում լսում և երգում են բազմաբնույթ և բազմատեսակ ստեղծագործություններ, կուտակում բազմապիսի երաժշտական տպավորություններ, երաժշտապես զարգանում, ձեռք բերում երաժշտություն ունկնդրելու և կատարելու փորձ, ինչը նպաստում է բարձր դասարաններում «Երաժշտություն» առարկայի չափորոշչային պահանջների կատարմանը:
- **«Օտար լեզուների»** ուսուցումը /ռուսաց լեզու 2-4-րդ դասարաններ և անգլերեն 3-4-րդ դասարաններ/ կառուցվել է նույն հաղորդակցական հմտությունների զարգացման և ինտեգրման մոտեցմամբ, ուստի՝ ռուսաց լեզվի և անգլերենի ընթերցանության հատվածական գրական

նյութերը դասավանդվել են որպես դասընթացի անքատելի մաս,ինչը նպաստում է սովորողների մոտ բանավոր,գրավոր խոսքի,քննական և ստեղծարար մտածողության կարողունակությունների զարգացմանը:

- **«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»** առարկայի ուսուցումը /2-րդ դասարաններում տարվել է թեմաների հաջորդականությամբ և դրանց ուսումնառությունը պետք է հիմնված լինի իմացության վրա, թե ինչպես են ժամանակի ընթացքում զարգանում սովորողների գիտելիքը, հմտություններն ու ըմբռնումը: Ինչ և ինչպես ենք աշակերտներին սովորեցնում, պետք է հիմնված լինի ոչ միայն թեմաների վրա, այլև արտացոլի այն առանցքային գաղափարները, որոնք կանխորոշում են, թե ինչպես է այս ոլորտում գիտելիքային բազան կառուցված և ինչպես է այն ստեղծվում: Սովորողներին պետք է խնդրել կիրառել իրենց սովորածը և դրա միջոցով ցույց տալ, թե ինչպես են իրենք մտածում և ընկալում բովանդակությունը:

**ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Առարկա	Մակարդակներ			
Աշակերտների թիվ	Ա,Բ 46 աշ.	Գ 27 աշ.	Դ 25 աշ.	Ե 15 աշ.
Մայրենի	Կարողանում են հասկանալով վարժ ընթերցել տեքստը , խոսքում կիրառում են հոմանիշ և հականիշ բառեր, լիարժեք հասկանում են լսածը և տալիս են համապատասխան արձագանք:	Ճիշտ և սահուն կարդում են տեքստը : Պատասխանում են կարդացածի բովանդակության վերաբերյալ հարցերին:Տեքստում գտնում են տրված բառերի հոմանիշ- հականիշներ բառերը, պարզ և հասկանալի պատմում են լսածը, տեսածը, ապրածը:	Ճիշտ կարդում են տեքստի որոշակի հատված , պատասխանում են կարդացածի վերաբերյալ պարզ հարցերի: Փորձում են հասկանալ լսածը և ներգրավվել քննարկման մեջ:	Լավ չի հասկանում լսածը, տալիս է ոչ ադեկվատ արձագանք:
Մաթեմատիկա	Ճանաչում, կարդում և գրում են երկնիշ թվերը, ըստ տրված օրինակի ներկայացնում են թիվը կարգային գումարելիների գումարի տեսքով; Գումարում և հանում են 100-ի սահմաններում:	Ճանաչում և օգնությամբ կարդում են երկնիշ թվերը, և ըստ տրված օրինակի ներկայացնում են թիվը կարգային գումարելիների գումարի տեսքով;Ըստ տրված օրինակի գումարում և հանում են 100-ի սահմաններում բանավոր և գրավոր:	Օգնությամբ ճանաչում և կարդում են երկնիշ թվերը, 100-ի սահմանում օգնությամբ հաշվում և 1-ական , 2-ական 5-ական 10-ական: Օգնությամբ կիրառում են գումարման տեղափոխական օրենքը:	Օգնությամբ և պատկերավորմամբ՝ որոշ դեպքերում կիրառում է գումարման տեղափոխական օրենքը:
Ես և շրջակա	Երգում են հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր, մաքուր ինտոնացիայով:	Նկարագրում են իրենց ու սիրելի զբաղմունքները:Նկարագր	Երածշտույթյան միջոցով փորձում են ստեղծել	Տարբերում են ուրախությունն ու տխրությունը

աշխարհը	Ունկնդրումից ստացած իրենց տպավորությունները ներկայացնում են գրագետ, կապակցված խոսքով:	ում են իրենց անցյալում և ներկայում : Տարբերում են առողջ և անառողջ սնունդը , գիտեն, որ պետք է նախաձաշել:	երաժշտական կերպար:Մեղեդու տրամադրությունը արտահայտում են երգելով: Ճանաչում են ստեղծագործության տեսակները:	արտահայտող պատկերները: Թվարկում են մի քանի զգայարան աչք, ականջ, բերան:Տրված օրինակներից ընտրում է որոշ առողջ և անառողջ սնունդ:
Կերպարվեստ	Ազատ մեկնաբանում են կերպարվեստի ստեղծագործական բովանդակությունը, գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ստանում են ճանաչելի պատկերներ: Թվարկում են գծագրական գործիքները:	Արտանկարում են, պատրաստում փորձելով նմանեցնել բնօրինակին:	Աշխատանքները հաճախակի վերանայվել են՝ նկատելի են՝ ռետինի և միջամտության հետքերը, պորտֆոլիոյում տեղադրելու համար անհրաժեշտ է լրամշակում:	Իր աշխատանքում չի կարողանում կիրառել կերպարվեստի տարրերի ու դիզայնի սկզբունքները:
Տեխնոլոգիա	Ազատ մեկնաբանում են կերպարվեստի ստեղծագործական բովանդակությունը, գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ստանում են ճանաչելի պատկերներ: Թվարկում են գծագրական գործիքները:	Կարողանում է նյութերը նախապատրաստել աշխատանքի:	Կարողանում է իր ընտրած մի քանի բնական և արհեստական նյութերը նախապատրաստել աշխատանքի համար:	Ճանաչում է թղթի որոշ տեսակներ /գրելու, փաթեթավորման/ :
ԹԳԹՇ	Բացատրում է էլեկտրականության հետ կապված աշխատանքի գլխավոր սկզբունքները՝ ինչ կարելի անել և ինչը՝ ոչ:	Կարողանում է բերել տարբեր գործընթացների կատարման օրինակներ առանց համակարգչի կիրառման և համակարգչով:	Օգնությամբ կարողանում է համեմատել նույն գործընթացի կատարման 2 եղանակները:	Տրված օրինակներում կարողանում է ցույց տալ հաշվողական սարքերի միջոցով կատարվող գործողությունները:
Շախմատ	Թվարկում է խաղաքարերի մոտավոր արժեքները: Կատարում է քայլեր խաղաքարերով, վերցնում է խաղաքարեր արքայով, շախ և հայտարարում:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը, կատարում է տրամաբանված քայլեր:	Անվանում և ցույց է տալիս խաղաքարերը:	Օգնությամբ և հուշումով ցույց է տալիս և անվանում խաղադաշտը:
Երաժշտություն	Երգում են հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր, մաքուր ինտոնացիայով: Ունկնդրումից ստացած իրենց տպավորությունները ներկայացնում են գրագետ, կապակցված խոսքով:	Ունկնդրումից ստացած տպավորությունները ներկայացնում են մի քանի բառով: Երգեցողության միջոցով ներկայացնում են երաժշտական կերպարներ:	Ունկնդրումից ստացած տպավորությունները ներկայացնում են մի քանի բառով: Երգեցողության միջոցով ներկայացնում են երաժշտական	Փորձում է երգել:

			կերպարներ:	
Ֆիզկուլտուրա	Կարևորում է առավոտյան հիգիենիկ մարմնամարզության ինքնուրույն կատարումը:	Գիտի սովորած ֆիզիկական վարժությունների շարժախաղերի անվանումներից մի քանիսը:	Կարողանում է վազել 30մ և դանդաղ վազել 5 րոպե ցուցաբերելով բավարար արդյունքներ:	Կարողանում է վազել 30մ ցուցաբերելով նորմատիվային պահանջից ցածր ցուցանիշով արդյունքներ:
Ռուսաց լեզու	Գիտի ուսուցանված բոլոր տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները և կանոնները:	Արձագանքում է ուսուցչի կամ ընկերների դանդաղ խոսքին և հրահանգներին՝ պարզ բառերի և բառակապակցություններ ի միջոցով	Ճանաչում և անվանում է դասարանում իրեն շրջապատող իրերն ու առարկաները:	Նկարների վրա ցույց է տալիս դասարանում իրեն շրջապատող իրերն ու առարկաները:

**Հիմնական պարտադիր կրթության իրագործմանը միտված աշխատանքների կատարողական**

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատուներ	Նշում
1.	Դպրոցի դասագրքային ֆոնդի պահպանության և աշակերտների դասագրքերով ապահովվածության մակարդակի ստուգումներ:	սեպտեմբեր 7	Գրադարանավար, դասվար	Կատարված է
2.	Դասարանների կոմպլեկտավորում:	մինչև սեպտեմբերի 7	տնօրեն, ուս. գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
3.	Նորմատիվ փաստաթղթերի վարման և լրացման կարգի ստուգումներ:	ուս. տարվա ընթացքում ՆԴՎ պլանով	,տնօրեն,ուս. գծով տնօրենի տեղակալ	
4.	Աշակերտների առողջական վիճակի ստուգում, առողջութ-յան թերթիկների ( տեղեկանքների ) գրանցում անձնական գործերում:	օգոստոս – սեպտեմբեր 15	դասվարներ, դպրոցի բուժքույր	Կատարված է
5.	Առաջին դասարանցիների ցուցակների հաստատում:	մինչև սեպտեմբերի 1	տնօրեն,ուս. գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
6.	ԿԱՊԿՈՒ երեխաների անհատական ուսուցման պլանների կազմում:	օգոստոս 20– սեպտեմբեր 5	ուս. գծով տնօրենի տեղակալ,ուսուցչի օգնականներ, դասվարներ	Կատարված է
7.	ԱՈՒՊ-ների կատարման վերահսկում:	ուս. տարվա ընթացքում ըստ ՆԴՎ պլանի	ուս. գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
8.	Միամսյակներ հանրակրթության սահմաններում	ընթացիկ	ուս. գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
9.	Աշակերտների հաճախելիության ստուգում, հաշվառում:	ուս. տարվա ընթացքում ըստ ՆԴՎ պլանի	ուս. գծով տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ կազմակերպիչ	Կատարված է
10.	Ուսումնական ծրագրերի կատարման վերահսկողություն:	Ընթացիկ՝ ըստ ՆԴՎ պլանի	ուս.աշխ. գծով տնօրենի տեղակալ,մ/մ նախագահներ	Կատարված է
11.	4-րդ դասարանցիների նախապատրաստում ավարտական քննությունների:	ուս. տարվա ընթացքում	ուս. գծով տնօրենի տեղակալ ուսուցիչներ	Կատարված է
12.	Սովորողների առաջադիմության մասին ծնողների իրազեկում:	կիսամյակների ընթացում և ավարտին	դասվարներ	Կատարված է



**ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի իրագործման  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ 01.09.-01.10.2023թ.**

<b>№</b>	<b>Աշխատանքի բովանդակություն</b>	<b>Պատասխանատու</b>	<b>Նշում</b>
1.	Աշակերտների հաճախելիության ստուգումներ դասարաններում:	դասվարներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ՏՈՒԱԳՏ, ԴԱ կազմակերպիչ	Կատարվել է ամենօրյա
2.	Տեղեկանք աշակերտների դասագրքերով ապահովվածության վերաբերյալ:	դասվարներ, գրադարանի վարիչ	Ապահովված են
3.	Աշակերտների անձնական գործերի ստուգումներ: I դասարանցիների անձնական գործերի ձևակերպում:	դասվարներ, գործավար	Կատարված է
4.	Տնային ուսուցման կարիք ունեցող աշակերտների բացահայտում:	ՏՈՒԱԳՏ, սոցմանկավարժ	Տարրական դասարաններում չեն բացահայտվել
5.	Հեռավար կրթության կազմակերպում	դասվար	Կատարվել է ծնողի դիմումի համաձայն
6.	Հաշվետվություն ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպման մասին:	Ուսուցչի օգնականներ, ՏՈՒԱԳՏ	Լրացված են ԱՈՒՊ-ները և կատարված է ընթացիկ, կիսամյակային գնահատում
7.	Էլ.մատյանի մշտադիտարկում:	Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, օպերատոր, գործավար	Ամենօրյա


**Խորհրդատվությունների թեմատիկա ուսուցիչների հետ  
2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում**

Տարեկան թեմատիկ պլանավորումների մասին/ԿԶՆԱԿ-ի կողմից սահմանված նմուշներ, վերջնարդյունքների սահմանում/
Ուսուցչի պարտականությունների ներկայացում՝ ըստ պաշտոնային նկարագրի:
Օրվա դասի պլանների քննարկում, ԿԶՆԱԿ-ի նոր ձևանմուշի փորձնական կիրարկում:
Էլեկտրոնային մատյանի վարման կարգի մասին:
Էլեկտրոնային մատյանի ընթացիկ գրանցումների և վերահսկողության մասին:
Նոր ՀՊԶ-ի ներդրման մասին:
ՆԴՎ դասալսումների քննարկում:
Դասարանների սանիտարահիգիենիկ իրավիճակի մասին:
Ուսուցչի օգնականների պարտականությունների մասին՝ ըստ պաշտոնային նկարագրի:
Թեմատիկ գրավոր աշխատանքների սահմանված քանակների և թեմատիկ միավորների մշակման վերաբերյալ:
ԿԱՊԿ ունեցող աշակերտների ԱՈՒՊ-ի մշակման մասին, ընթացիկ աշխատանքների իրականացման մասին:
Հեռավար կրթություն ստացող աշակերտների ուսումնառության մասին:
Տարրական դպրոցում ստուգման սահմանված ձևերի մասին՝ տնային առաջադրանքներ, համառոտ գրավոր աշխատանքներ, ծավալուն գրավոր աշխատանքներ, համառոտ բանավոր հարցում, ծավալուն բանավոր հարցում, ամփոփիչ թեստեր՝ թեմատիկ, գործնական, կիսամյակային:
Մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման մասին ՏՄԱԿ-ի կողմից:

Աշակերտների բացակայությունների մշտադիտարկման մասին:
Մովորողների ընթացիկ առաջադիմության հարցեր:
Ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման մասին հարցեր:
Մովորողների վարքի մասին, հսկողություն՝ ներքին կարգապահական կանոնների համաձայն:
Մեթոդափոխման աշխատանքների ընթացիկ նիստերի և որոշումների կատարման մասին քննարկումներ:
Նորմատիվ իրավական ակտերի ծանոթացում, փոփոխությունների իրազեկում:

### Պարտադիր ատեստավորված ուսուցիչներ՝ 2023

Ն.Արշակյան	դասվար
Լ.Օսիպյան	դասվար



	2021-2022	2022-2023	2023-2024	
դասվարների քանակ	16	16	16	
ատեստավորված դասվարների քանակ	2	11	16	
ատեստավորման ենթակա դասվարների քանակ	14	5	-	
տարակարգումեցող դասվարներ	1	1	-	

**Վերլուծություն.** ատեստավորված ուսուցիչների քանակը աճել է՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հունվարի 26-ի N98-Ն որոշմամբ հաստատված «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՇԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԻ»:

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Տարրական կրթական մակարդակում ուսումնադաստիարակչական աշխատանքների ՆԴՎ նպատակները

- ❖ Հաստատությանը ներկայացվող արդի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպում՝ ըստ տեղեկատվական բազայի վերլուծության:
- ❖ Ստանալ ամբողջական և համակողմանի տեղեկատվություն տարրական աստիճանում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին և առաջացող խնդիրները լուծելու համար ժամանակային անհրաժեշտ փոփոխություններ կատարել:
- ❖ Չափորոշչային պահանջներին համապատասխան սովորողների կրթական մակարդակի ապահովում:
- ❖ Ուսուցիչների մեթոդական աջակցության տրամադրում:
- ❖ Թերությունների և դժվարությունների վերհանում և շտկում, առաջավոր փորձի փոխանակում և տարածում:

**Խնդիրները՝**

- ❖ Դպրոցի բնականոն զարգացման համար ստեղծել ուսումնակրթական բարենպաստ միջավայր:
- ❖ Դպրոցի ադմինիստրացիայի և մանկավարժական կոլեկտիվի համատեղ գործունեության ապահովում:
- ❖ Ներդպրոցական վերահսկողության համատեղում աշխատակիցների աշխատանքների ինքնավերլուծության և ինքնավերահսկման գործունեության հետ:
- ❖ Առարկայական ծրագրի կատարողականի պարբերաբար ստուգումներ:
- ❖ Դասավանդվող առարկաների արդյունքների վերահսկողություն:
- ❖ Աշակերտների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի փուլային վերահսկողություն,որի ընթացքում պարզվում է նրանց գիտելիքների մակարդակը,հմտությունների և կարողությունների տիրապետումը,ինքնուրույն սովորելու կարողությունը:
- ❖ Ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման ժամանակ ուսուցիչներին անհրաժեշտ օգնության տրամադրում:
- ❖ Ուսուցիչների փորձի ուսումնասիրություն:
- ❖ Տարրական դպրոցի բոլոր տեսակի պլանների կատարման մշտական վերահսկողություն,վարչական որոշումների կայացում:

ՆԴՎ շրջանակներում առարկայական դրվածքներ,դասավանդման որակի ուսումնասիրություններ

1-ին կիսամյակում , դասավտումներ այդ ուղղությամբ

№	Թ է մ ա տ ի կ ա	կատարման ժամկետ	նպատակը	ՆԴՎ ձև	նշում
1	<p align="center">❖ Առարկայական նախագիտելիքների ստուգումներ /2-4 դաս/</p> <p>Առարկայական նախընտրություններ՝ մայրենի,մաթեմատիկա, օտար լեզուներ:</p>	սեպտեմբեր	-դպրոցում ուսուցիչների դասավանդման որակի մեկնարկային ստուգումներ, -աշակերտների մոտ բարձրացնել պատասխանատվության զգացումը:	Դասավտումներ,դասերի համընդհանուր դիտարկումներ, քննարկումներ դասավանդվող առարկաների նախնական արդյունքների վերահսկողություն, կոմպլեքս ստուգումներ:	Գոտորված է

	<p>❖ Չարգացնող, ուսումնական խաղերի կիրառումը 1-ին դասարաններում:</p> <p>❖ Ուսուցման կազմակերպման ձևերը, ակնկալվող վերջնարդյունքների հասնելու ուսուցչի մասնագիտական մոտեցումները ըստ պետական չափորոշային և առարկայական չափորոշիչների /2-4 դաս./</p> <p><b>Առարկայական նախընտրություններ՝</b> մայրենի, մաթեմատիկա, օտար լեզուներ, ես և շրջակա աշխարհը:</p>	<p>հոկտեմբեր</p>	<p>- խաղերի ձգտումը զարգացնել 6 տարին նոր լրացած երեխայի մոտ, դիդակտիկ խաղերը կարևորել որպես ճանաչողական գիտելիքների ձեռքբերման միջոց:</p> <p>- կարևորել վերջնարդյունքները որպես առարկայական ծրագրերի կատարման ուղենիշ, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության ձևավորման բաղադրիչ, որոնք բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:</p>	<p>Դասալսումներ, դասերի նպատակայնության և արդյունավետության քննարկումներ, դասարանական-ընդհանրական դիտարկումներ, ուսուցիչների գործունեության բազմակողմանի վերլուծություն, ֆրոնտալ ստուգումներ:</p>	<p>Կատարված է</p>
